ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 12 մարտի 2007 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը
Նախագահությամբ Ռ.Պապայանի
Անդամակցությամբ Վ.Հովհաննիսյանի
Հ.Դանիելյանի

Քննության առնելով << քաղաքացի Միսակ Պողիկյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղ. Միսակ Պողիկյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով << քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2 հոդվածի 1-ին կետի սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է << Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին << օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ << Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են << Սահմանադրությանը:

Գործում առկա է պետական տուրքի վճարումից ազատելու միջնորդությունը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին << օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով, Սահմանադարական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

Մ. Պողիկյանի դիմումը << քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2 հոդվածի 1-ին կետի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել << Ազգային Ժողովին:

Մ. Պողիկյանին ազատել պետական տուրքի վճարումից, հաշվի առնելով, որ նա թոշակառու է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ